## 46. ՁԵՅԹՈՒ ԳՅՈՒՂ (ՀՆՈՒՄ՝ ՁԵԳԵՍԱՅ)

***655. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.***

Տիլանի որդի Աւագին. թվ. ։ՌՃԽԲ։ (1693)։

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1891, թիվ Ա, 42։ Ալիշան, 178։*

***656. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.***

Թվ. ։ՌՃԿԲ։ (1713) Տէր Օվանէսի եղբօր.

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1891, թիվ Ա, 42։ Ալիշան, 178։*

***657. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.***

Տաւպանս կանգնեց թվին ։ՌՃԿԲ։ (1713) Տիրզալի խանին։

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1891, թիվ Ա, 42։ Ալիշան, 178։*

## 47. ՓՈՌ ԳՅՈՒՂ (ՀՆՈՒՄ՝ ԲՈՐ)

***658. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ,** որը գտնվում էր գերեզմանատանը.*

Ես Սարգիս ⌈կանգնեցի խաչս⌉ բարեխաւս հաւր, թվին ։ՉԾԶ։ (1307)։

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1891, թիվ Ա, 52 (համարում է բերված Սոյլանից)։ Ալիշան, 178։*

***659. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ,** նույնտեղ.*

Թվ։ ։ՉԻԲ։ (1273)։

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1891, թիվ Ա, 52 (համարում է բերված այլ տեղից)։ Ալիշան, 178։*

## 48. ԳԱՆՁԱԿ (ԵՆԳԻՋԱ)

***660. ԽԱՉՔԱՐ,** կանգնած պատվանդանի վրա, գտնվում է Գնիշիկ տանող ճամփի եզրին, երկու գյուղերի սահմանաբաժան բարձունքի վրա. քիվին և պատվանդանի վրա 8 տող.*



ՅՈՒՍՈՎՆ ⌈Ա.Ց. ԵՍ . . . . . . . .⌉ ԱՄՈՒՍԻՆ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ ՍԱՐԳՍԻ, ՈՐԴՈՑ . . . ԴՈՒՍՏՐ ՍԿԻԹԱՑԻ ԻՇԽԱՆԻ ԹՈՂԵԱԼ . . . . . . . . . Լ-ՈՒՍԱՒՈՐԵԱԼ ՔԻ. ԴՐՈՇԱՒՆ, ՍՏԱՑԱ ՁԽԱՉՍ ՅԻՄ ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ ՑԻՇ-ԱՏԱԿ ՀՈԳՒՈ ԻՄՈ. ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳ⌈էՔ⌉ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ. Ի ԹՎ. ։ՈՀԴ։ (1225)։

Ծանոթ. *Խաչքարի վրա հատարակ քարերով ալժմ շինված է մատուռ. պատվանդանը լորված է հողի մեջ և ծածկված մամի շերտով. արձանագրությունը խիստ քայքայված է. տեղացիները անվանում են* Դալիխաչ։